Անի Կիրակոսյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր – աշխատանքի շուկա, զբաղվածություն, գործազրկության մակարդակ, աշխատատեղերի ստեղծում, աշխատանքի արտադրողականություն, արդյունավետություն:

Շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ գյուղատնտեսությունում աշխատաշուկայի զբաղվածության հիմնախնդիրների լուծումը հեռանկարում հնարավոր է մի շարք հետևողական քայլերի շնորհիվ: Նախ, անհրաժեշտ է նվազագույնի հասցնել չմշակվող գյուղատնտեսական հողատեսքերը, ապահովել աշխատանքի արտադրողականության աճ, երիտասարդ մասնագետների համար գյուղում ստեղծել աշխատատեղեր, պետականորեն հստակեցնել և սահմանել նվազագույն աշխատավարձի առավել բարձր շեմ:

Աշխատաշուկայի հեռանկարային կայունացում հնարավոր չէ առանց ագրարային խորհրդատվության ապահովման, գյուղատնտեսական արտադրության սպասարկման, մատակարարման, իրացման ոլորտներում պետական աջակցության և աշխատանքային միգրացիայի մեղմացման ծրագրերի մշակման և գյուղում նոր աշխատատեղերի ստեղծման:

Աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և զբաղվածության մակարդակի բարձրացումը ՀՀ աշխատանքի կայունացման գերակայություններն են: Զբաղվածների թվի աճը և աշխատանքի շուկայից տարբեր պատճառներով դուրս մնացած մարդկանց մուտքը աշխատանքի շուկա՝ նվազագույն աշխատավարձի համապատասխան քաղաքականության գործադրումը հետ սոցիալական լարվածության մեղմացման հիմնական մեխանիզմն են: Հայաստանի աշխատանքի շուկան ունի մի առանձնահատկություն՝ աշխատանքային միգրանտների մեծ բանակ:

Աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և զբաղվածության մակարդակի բարձրացումը ՀՀ աշխատանքի կայունացման գերակայություններն են: Զբաղվածների թվի աճը և աշխատանքի շուկայից տարբեր պատճառներով դուրս մնացած մարդկանց մուտքը աշխատանքի շուկա՝ նվազագույն աշխատավարձի համապատասխան քաղաքականության գործադրումը, սոցիալական լարվածության մեղմացման հիմնական մեխանիզմն են: Հայաստանի աշխատանքի շուկան ունի մի կարևոր առանձնահատկություն՝ աշխատանքային միգրանտների մեծ բանակ: Ներկայումս աշխատանքային միգրանտի կարգավիճակում երկրի սահմաններից

դուրս գտնվողները համալրում են տնտեսապես պասիվ աշխատանքային ռեսուրսները: Միգրացիոն հոսքերի և պայմանների փոփոխությունները տարբեր ազդեցություն կարող են ունենալ աշխատանքային շուկայի վրա՝ կախված այդ փոփոխությունների բնույթից: Մասնավորապես՝ Հայաստանում տնտեսական ակտիվության աճով պայմանավորված միգրանտների վերադարձի պարագայում հնարավոր է գործազրկության և աշխատուժի մասնակցության ցուցանիշների աճ: Այսինքն, ենթադրվում է, որ նման պարագայում նրանք կվերադառնան տնտեսական խթաններից ելնելով՝ Հայաստանում աշխատանք գտած լինելու պարագայում, մինչդեռ, վերադարձից հետո աշխատանքի չտեղավորվելու դեպքում, նրանց փաստացի կարգավիճակը փոփոխության չի ենթարկվի:

Աշխատանքային միգրացիան ինքնին բացասական երևույթ է աշխատաշուկայի համար, իսկ դրա դեմ արդյունավետ պայքարի միջոցներ են տնտեսական ճիշտ խթանների ստեղծումը, տարածքային համաչափ զարգացումը, աշխատատեղերի ստեղծումը և այլն:

Ըստ ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի մինչև 2025թ. ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թիվը 2012թ. համեմատ կավելանա շուրջ 220 հազարով, որից 60 հազարը՝ մինչև 2017թ. ընկած ժամանակահատվածում: Ծրագրում հաշվարկները ցույց են տվել, որ ապագայում 2014-2025 թթ. մեկ տոկոսային կետ տնտեսական աճը հանգեցնելու է միջին հաշվով 0.20 տոկոսային կետ զբաղվածության մակարդակի աճի:

Զբաղվածության ընդլայնման առանձնահատկություններից մեկը բարձր որակավորում ունեցող աշխատուժի համար հնարավորությունների ընդլայնում՝ հարաբերականորեն առավել բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծում:

ՀՀ-ում զբաղվածության և գործազրկության մակարդակի, ինչպես նաև ՀՆԱ-ի հնարավոր աճի կանխատեսումային մեծությունները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Զբաղվածությունը, գործազրկությունը և ՀՆԱ-ի հնարավոր աճը ՀՀ-ում 2014-2025թթ.(1)

Ցուցանիշներ	2014	2015	2016	2017	2021	2025
Զբաղվածության մակարդակ, %	57.3	58.0	58.7	59.6	64.7	71.1
Գործազրկության մակարդակ, %	17.2	16.9	16.5	16.0	13.1	10
ՀՆԱ-ի հնարավոր աճ, %	5.5	5.7	5.9	6.1	6.4	6.5

Ինչ վերաբերում է ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի հաշվարկներին, դրանք բավականին իրատեսական և փոքր-ինչ լավատեսական են, որովհետև եթե հաշվի առնենք, որ ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների 2013թ. ՀՀ-ում զբաղվածության մակարդակը կազմել է 53.2%, իսկ գործազրկության մակարդակը 16.2%, ապա մինչև 2025թ. մեծ ջանքեր են անհրաժեշտ ներդնել 71% զբաղվածության մակարդակ և 10% գործազրկության մակարդակ ապահովելու համար:

Մյուս կողմից եթե դիտարկենք, որ ՀՀ-ի բնակչության թվաքանակը ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների 2013թ կազմել է 3.017 մլն մարդ (2), այնինչ ըստ ոչ պաշտոնական տվյալների այն չի գերազանցում 2.5 մլն-ը, ապա շարունակվող միգրացիայի պայմաններում հնարավոր է, որ մինչև 2025թ.-ը հասնենք զբաղվածության մակարդակի նման ցուցանիշի, սակայն այն կարող է դրսևորվել բնակչության թվաքանակի նվազմանը զուգընթաց:

Աշխատանքի շուկայի ակտիվ քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել երիտասարդության շրջանում գործազրկության հիմնախնդիրներին, մասնագետների վերապատրաստման ծրագրերի իրականացմանը, նվազագույն աշխատավարձի ճիշտ չափի սահմանմանը և այլն: Նվազագույն աշխատավարձի աճը պետք է համահունչ լինի միջին աշխատավարձի դինամիկային և հնարավորինս բացառի աշխատուժի պահանջարկի և առաջարկի միջև շուկայական հավասարակշռության խախտումները:

Ընդհանուր առմամբ, հեռանկարում գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թվի ավելացում չի ենթադրվում: Ոլորտի հետագա զարգացումը հիմնականում պետք է պայմանավորված լինի աշխատանքի արտադրողականության մակարդակի աճով: Միևնույն ժամանակ, գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականության մակարդակի աճին զուգընթաց կամ որպես այդ աճն ապահովող մեխանիզմ, գյուղական վայրերում պետք է ավելացնել ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունները:

Նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորություններ կան մատակարարման օղակում (սերմեր, տնկիներ, մեքենաների, սարքավորումների նորոգման ծառայություններ), արտադրական գործընթացի սպասարկման և իրացման օղակներում: Գյուղատնտեսական արտադրության սպասարկում-իրացում շղթայի ձևավորման պարագայում 2017-2025թթ.գյուղական վայրերում հնարավոր է զբաղվածների թվի ավելացում 8-10 հազարով:

Գրականություն

1. Լ.Լ. Հակոբյան, «Հայաստանի Հանրապետության ագրարային աշխատանքի էկոնոմիկա», Երևան, 2014թ.
2. ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի, N442-Ն որոշման հավելված
3. ՀՀ, ԱՎԾ, Հայաստանի Վիճակագրական տարեգիրք, 2014, էջ 24
4. ՀՀ, ԱՎԾ, Հայաստանը թվերով, 2014, էջ 30

ANNOTATION

Ani Kirakosyan

LABOR MARKET STABILIZATION PROSPECTIVES IN RA

Key words: labor market, employment, unemployment rate, creation of new vacancies, labor productivity, effectiveness.

In the conditions of market economy solving agricultural labor market problems in the prospective future, is possible due to a number of consistent steps. First, it is necessary to minimize the amount of uncultivated agricultural land, ensure labor productivity growth, create new vacancies for young professionals in the rural places, officially clarify and define reasonable amount of minimal wages in RA and provide higher threshold for it.

Long-term stabilization of the rural labor market in RA is impossible without development of agricultural advisory services, enhancing the agricultural production maintenance sphere, improving the supply-chain management, expansion of realization markets and etc. Governmental intervention is needed to apply reasonable policies for mitigation of migration of labor recourses and for creation of new vacancies in the rural places of RA.